

American Express® Քարտերի տրամադրման և սպասարկման կանոններ

1. Կանոններում կիրառվող եզրույթները և սահմանումները

| | |
|---------------------------------|--|
| «Բանկ» | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| «Ամերիքն Էքսպրեսս» | Ամերիքն Էքսպրեսս Լիմիթիդ՝ Քարտը սպասարկող վճարային համակարգ |
| «Քարտ» | Բանկի կողմից թողարկված American Express Blue, American Express Cashback, կամ American Express Gold տեսակի քարտ |
| «Կից Քարտ» | Միևնույն Քարտային հաշվին կցված նույն վճարային համակարգի և նույն տեսակի Քարտ |
| «Լրացուցիչ Քարտ» | Միևնույն Քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի Քարտ՝ նույն Քարտատիրոջ անունով |
| «Քարտի գործողության ժամկետ» | Քարտի վավերականության ժամկետը, որը նշված է Քարտի դիմերեսին «աա/տտ» ֆորմատով, ընդ որում՝ Քարտը գործում է մինչև նշված ամսվա վերջին օրը ներառյալ |
| «Քարտի գործողության դադարեցում» | Քարտատիրոջ գրավոր դիմումի հիման վրա Քարտի և Քարտային հաշվի փակում |
| «Քարտատեր» | Ռեզիդենտ ֆիզիկական անձ, ով տնօրինում է իր անուն, ազգանունը կրող Քարտ և ուն անունով Բանկը բացել է Քարտային հաշիվ |
| «Չաշիվ» | Քարտային հաշիվ, որից հնարավոր է օգտվել Քարտի միջոցով |
| «Քարտի մնացորդ» | Չաշվին առկա սեփական միջոցների և Բանկի կողմից Քարտատիրոջը տրամադրված վարկային գծի և ժամանակավոր օվերդրաֆտի հանրագումարը՝ նվազեցված հավաստագրված, սակայն Բանկում չհաշվանցված գործառնությունների գումարի չափով |
| «Քարտի տվյալներ» | Քարտի այն տվյալները (Քարտի համարը, Քարտի գործողության ժամկետը և/կամ Քարտի իսկությունը ստուգող կոդը, Քարտի մագնիսական ժապավենը, Քարտատիրոջ անունը, ազգանունը), որոնց միջոցով հնարավոր է իրականացնել գործառնություն |
| «Ժամանակավոր օվերդրաֆտ» | Չաշվի և վարկային գծի մնացորդը Քարտատիրոջ կողմից գերազանցելու ժամանակավոր հնարավորություն, որը տրամադրված է Քարտատիրոջը Բանկի կողմից |
| «Վարկային գիծ» | Համապատասխան վարկային գծի պայմանագրով սահմանված պայմաններով և չափով Բանկի կողմից Քարտատիրոջը վերջինիս Քարտով սպասարկվող հաշվով տրամադրվող վարկային միջոցներ, որոնք Քարտատիրոջ կողմից մարվելու դեպքում վերականգնվում են սահմանված կարգով: |
| «Գերաժախս» | Պարտավորություն, որն առաջանում է Քարտով Գործառնություն կատարելու արդյունքում՝ հանգեցնելով Քարտի մնացորդի գերազանցմանը |
| «Սպասարկման կետ» | Քարտը որպես անկանխիկ վճարային գործիք ընդունող առևտրի կամ սպասարկման ոլորտում գործող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, այդ թվում՝ ինտերնետի միջոցով վաճառքներ իրականացնող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր |
| «Կանխիկ տրամադրման կետ» | Քարտով կանխիկ գումար տրամադրող հաստատություն |

| | |
|--------------------------------------|--|
| «Բանկոմատ» | ՊԻՆ-կոդի ստուգմամբ Քարտով կանխիկ գումար տրամադրող, ինչպես նաև կոմունալ վճարումներ և քարտից քարտ փոխանցում կատարելու, այլ գործառնություններ իրականացնելու հնարավորություն տրամադրող սարքավորում |
| «ՊԻՆ-կոդ» | Բանկի կողմից փակ ծրարով Քարտի հետ միասին տրամադրված կամ SMS հաղորդագրության միջոցով ստացված կոդի հիման վրա Քարտատիրոջ կողմից սահմանված քառանիշ կոդ, որն օգտագործվում է Քարտով կանխիկ գումար ստանալիս, վճարումներ կատարելիս և այլ գործառնությունների ժամանակ |
| «Գործառնություն» | ՊՈՍ տերմինալի միջոցով վճարում, Քարտի տվյալների ներկայացմամբ վճարում, ինտերնետի միջոցով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար վճարում, կանխիկ միջոցների ստացում բանկոմատներից և կանխիկ տրամադրման կետերից, վճարային տերմինալների միջոցով կանխիկ գումարի մուտքագրում Քարտին, ՀՀ տարածքում առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի և բանկոմատի միջոցով քարտից քարտ փոխանցում կամ վճարում, էլեկտրոնային դրամապանակների միջոցով վճարում, օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով չարգելված այլ գործառնություններ |
| «Հավաստագրում» | «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնից (այսուհետ՝ Պրոցեսինգային կենտրոն) Քարտով Գործառնություն կատարելու համար կապի էլեկտրոնային միջոցներով ստացվող հաստատում |
| «Էլեկտրոնային վճարում» | Ինտերնետային կայքի միջոցով ապրանքների կամ ծառայությունների դիմաց Քարտի տվյալների մուտքագրման միջոցով կատարված վճարում կամ մի Քարտից այլ Քարտի գումար փոխանցելու և վճարում կատարելու համար ՀՀ տարածքում առցանց հարթակներում իրականացվող Գործառնություն: |
| «Cashback» | American Express Cashback Քարտով կատարված վճարային Գ գործառնությունների գումարի որոշակի տոկոսի վերադարձ Հաշվին |
| «Membership Rewards» ծրագիր | Membership Rewards ծրագիրը նախատեսում է American Express Blue/Gold Քարտով Հայաստանի Հանրապետությունում (American Express Gold քարտերի դեպքում՝ նաև արտերկրում) կատարած բոլոր վճարային գործառնությունների դիմաց (American Express Gold քարտերի դեպքում՝ նաև կանխիկացման գործառնությունների դիմաց) միավորների կուտակում, որոնք հետագայում փոխարինվում են Բանկի կողմից առաջարկվող պարգևատրումներով (այսուհետ՝ Պարգևատրում) |
| «Ճանապարհային օժանդակություն» | American Express Blue/American Express Gold Քարտատիրոջ տրանսպորտային միջոցի հետ տեխնիկական խնդիրների առաջացման դեպքում վերջինիս տարահանման ծառայություն տրանսպորտային քարշակների օգնությամբ՝ Քարտատիրոջ նախընտրած ուղղությամբ |
| «Սակագներ» | Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 12.04.2018թ.-ին հաստատված Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագնի՝ TC 01-05, տվյալ պահին գործող խմբագրություն (հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում՝ www.acba.am) |

2. Ընդհանուր պայմանները

2.1. Քարտատերը, ստորագրելով վճարային քարտի դիմումը (այսուհետ՝ Դիմում), Բանկին ներկայացնում է պայմանագրի կնքման առաջարկ: Բանկը Քարտատիրոջ առաջարկն ընդունելու դեպքում ստորագրում է վճարային քարտի դիմումը (ակցեպտ), ինչի արդյունքում Քարտատիրոջ և Բանկի միջև համապատասխան վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համարվում է կնքված: Սույն կանոնները (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Պայմանագրով Բանկը պարտավորվում է Քարտատիրոջ համար բացել Հաշիվ, Քարտատիրոջը տրամադրել Քարտ, ընդունել և Հաշվին մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել Հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և Հաշվով այլ Գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Քարտատիրոջ կարգադրությունները, իսկ Քարտատերը պարտավորվում է վճարել Բանկին մատուցված ծառայությունների համար՝ Սակագներով սահմանված կարգով: Հաշվի տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը նախատեսված է Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 22.04.2013թ.-ին հաստատված TC 01-01#6 Հաշվարկադրամարկային գործառնությունների սակագնի տվյալ պահին գործող խմբագրությամբ (հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում www.acba.am) (այսուհետ՝ Սակագներ) և/կամ եթե սահմանափակումը բխում է Բանկի նկատմամբ կիրառելի իրավական կարգավորումներից/սահմանափակումներից և/կամ եթե Բանկի գնահատմամբ սահմանափակումը անհրաժեշտ է նշված իրավական կարգավորումներից/սահմանափակումներից բխող Բանկի ռիսկերի զսպման նպատակով:

3. Հաշվով Գործառնությունների իրականացման կարգը

3.1. Հաշվով Գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Ամերիքն Էքսպրեսսի կանոններով սահմանված կարգով:

3.2. Հաշվով Գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից Քարտատիրոջը տրամադրված Քարտով:

3.3. Քարտի վրա նշված են Քարտատիրոջ անունը, ազգանունը, Բանկի անվանումը, Քարտը սպասարկող վճարային համակարգի՝ Ամերիքն Էքսպրեսսի ապրանքանշանը, Քարտատիրոջ ստորագրությունը, Քարտի համարը, Քարտի գործողության ժամկետը, Քարտի իսկությունը ստուգող կողը և այլն:

3.4. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և պետք է հետ վերադարձվի Բանկին հետևյալ դեպքերում՝

3.4.1. Բանկի պահանջով,

3.4.2. Քարտի գործողության ժամկետը լրանալու դեպքում,

3.4.3. Քարտը վնասվելու դեպքում,

3.4.4. Պայմանագիրը լուծվելու դեպքում,

3.4.5. Պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում:

3.5. Քարտի ՊԻՆ կոդը տրամադրվում է Քարտատիրոջը Քարտը պատվիրելիս Քարտատիրոջ կողմից ընտրված հետևյալ տարբերակներից որևէ մեկով.

3.5.1. թղթային, որի դեպքում ՊԻՆ կոդը տրամադրվում է փակ ծրարով,

3.5.2. SMS հաղորդագրության միջոցով, որի դեպքում Քարտատիրոջ՝ Բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար:

Վերը նշված տարբերակներից որևէ մեկով սահմանված ՊԻՆ կոդը մոռանալու դեպքում Քարտատիրոջ դիմումի հիման վրա Քարտատիրոջը SMS հաղորդագրության միջոցով ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար:

3.6. Քարտատիրոջ դիմումի հիման վրա Քարտատիրոջը տրամադրվում է Կից քարտ, որով Գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Ամերիքն Էքսպրեսսի կանոններով սահմանված կարգով, որոնց համար պատասխանատվություն է կրում Քարտատերը:

3.7. Բանկը սահմանափակում է Քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման գործառնությունների քանակը և առավելագույն գումարը, մեկ օրվա ընթացքում վճարային գործառնությունների առավելագույն գումարը, [արտարժույթային քարտերի դեպքում նաև քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարը, իսկ կից քարտերի դեպքում կարող է սահմանափակել նաև մեկ ամսվա ընթացքում կանխիկի ստացման ու վճարային գործառնությունների առավելագույն գումարը](#), որոնք կարող են Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված չափով փոփոխվել՝ [Քարտապահի Քարտատիրոջ կողմից Բանկի դիմելու դեպքում կամ «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: Ընդ որում, կից քարտերի ամսական սահմանաչափերը և արտարժույթային քարտերի դեպքում քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարի սահմանաչափը կարող են փոփոխվել բազառապես Քարտատիրոջ կողմից Բանկ այցելելու դեպքում:](#)

3.8. Հաշվին մուտքագրված դրամական միջոցները կարող են օգտագործվել ամենաուշը սկսած հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ից:

3.9. Քարտատիրոջ դիմումի համաձայն Քարտի գործողության դադարեցման, Քարտի կորստի, վնասման, ՊԻՆ-կոդը մոռանալու կամ այլ դեպքերում Հաշվին առկա սեփական միջոցների վճարումը կատարվում է Բանկի դրամարկղից կամ այլ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ Սակագների համաձայն:

3.10. Կանոններով սահմանված Գործառնությունները Բանկի կողմից ձևակերպվում են Պրոցեսինգային կենտրոնի կողմից այդ Գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը Բանկ ուղարկելուց հետո առավելագույնը չորս աշխատանքային օրվա ընթացքում:

3.11. Բանկն իրավունք ունի առանց [Քարտապահի Քարտատիրոջ](#) համաձայնության ուղղել քարտային հաշվով գործառնություններ իրականացնելիս իր կողմից թույլ տրված, այդ թվում՝ ծրագրային սխալները:

4. ԹՈՔԵՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՅՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Բանկի կողմից թողարկված American Express ~~Gold և American Express Blue~~ [վճարային համակարգի](#) քարտերով գործառնությունները հնարավոր է իրականացնել նաև դրանց թվային համարժեքների (այսուհետ՝ Թոքեն) միջոցով:

4.2. Թոքենների ստեղծումը հնարավոր է իրականացնել [iOS-օպերացիոն համակարգով աշխատող սարքավորումների կիրառմանը «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի և/կամ «Apple Wallet» և/կամ «Google Pay» դրամապանակների միջոցով:](#)

4.3. Թոքեններով վճարման գործառնություններ հնարավոր է կատարել այն առևտրի/սպասարկման կետերում, որոնք սպասարկում են առանց հպման քարտեր:

4.4. Թոքեններով կատարված գործառնությունները հավասարազոր են քարտով կատարված գործառնություններին:

4.5. Թոքենների ստեղծման գործընթացում քարտատիրոջ քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է American Express վճարային համակարգի կողմից:

4.6. Բջջային հեռախոսը կորցնելու դեպքում Թոքենի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ:

4.7. Բոլոր այն դեպքերում, երբ քարտը բլոկավորվում է այնպիսի պատճառով, որը չի սահմանափակում քարտային հաշվին առկա միջոցների օգտագործման հնարավորությունը, ապա գործում են հետևյալ պայմանները.

4.7.1. բլոկավորված քարտի համար հնարավոր է ստեղծել նոր Թոքեն:

4.7.2. բլոկավորված քարտին նախկինում կցված Թոքենները չեն բլոկավորվում:

4.7.3. [բլոկավորված քարտին կցված Թոքեններով հնարավոր է իրականացնել գործառնություններ:](#)

4.8. ~~Բլոկավորված քարտին կցված Թոքեններով հնարավոր է իրականացնել գործառնություններ:~~

5. Հաշվի սպասարկման պայմանները

5.1. Հաշվի սպասարկման պայմանները, այդ թվում՝ Հաշվի բացման, Քարտի տրամադրման, Հաշվի սպասարկման և Քարտի փոխարինման միջնորդավճարների չափերը, Հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափը, Կից քարտերի սպասարկման պայմանները և այլ պայմաններ սահմանվում են Սակագներով, եթե Բանկի և Քարտատիրոջ միջև այլ համաձայնություն չի կայացվել:

5.2. Այն Քարտերի դեպքում, որոնց կցված չէ վարկային գիծ, Քարտատերը Քարտի ստացման օրը պետք է իր Հաշվին վճարի Քարտի առաջին տարվա կամ ամսվա սպասարկման միջնորդավճարը: Այն Քարտերի դեպքում, որոնց կցված է վարկային գիծ, Քարտի առաջին տարվա կամ ամսվա սպասարկման միջնորդավճարը գանձվում է վարկային գծի ակտիվացման օրը՝ վարկային գծի միջոցների հաշվին, իսկ վերջինիս անբավարարության դեպքում սպասարկման միջնորդավճարի գումարը ձևակերպվում է որպես գերածախս: Հաջորդ ամիսների կամ տարիների սպասարկման միջնորդավճարները գանձվում են յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե Քարտի համար սահմանված է ամսական սպասարկման միջնորդավճար), կամ Քարտի տրամադրման ամսվա հաջորդող յուրաքանչյուր 13-րդ ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե Քարտի համար սահմանված է տարեկան սպասարկման միջնորդավճար): Ընդ որում, եթե Քարտի գործողության ժամկետը դադարեցվում է սահմանված ժամկետից շուտ, ապա նախապես վճարված Հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա չէ վերադարձման:

5.3. Քարտատիրոջ գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Քարտի գործողության ժամանակավորապես կասեցումը (բլոկավորումը) չի դադարեցնում Քարտի գործողությունը, ինչպես նաև Հաշվի սպասարկման միջնորդավճարի գանձումը:

5.4. Քարտատիրոջ կողմից Քարտի գործողության դադարեցման համար Բանկ գրավոր կամ բանավոր դիմելուց անմիջապես հետո Բանկն իրականացնում է Քարտի բլոկավորում, իսկ Քարտը և Հաշիվը փակվում են Քարտատիրոջ գրավոր դիմումի հիման վրա, Քարտով նախկինում կատարված բոլոր Գործառնությունները Հաշվով ձևակերպելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանով, որ Հաշվի մնացորդը բավարարում է Քարտով կատարված Գործառնությունները ձևակերպելու և դրանց համար Սակագներով նախատեսված միջնորդավճարները գանձելու համար: Ընդ որում, Քարտի գործողության դադարեցման դիմում ներկայացնելիս Քարտը Բանկ հետ չվերադարձնելու դեպքում Քարտատերը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում Քարտի գործողության դադարեցումից հետո մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը Քարտով կատարված հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար: Քարտի փակումը հնարավոր է իրականացնել միայն բոլոր դրամային պարտավորությունները (Հաշվի սպասարկման միջնորդավճարը, գերածախսի և դրա տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, գերածախսի տոկոսները, գերածախսի գումարը, վարկային գծի գումարի և տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց տոկոսները, ժամկետանց վարկային գծի գումարը, տոկոսները և վարկային գծի գումարը) կատարելուց հետո:

5.5. Բանկը Քարտի գործողության ընթացքում Սակագներով սահմանված չափով Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկում և վճարում է տոկոսագումարներ: Ընդ որում, տոկոսագումարների հաշվարկը կատարվում է օրական՝ սկսած Հաշվին դրամական միջոցների մուտքագրման օրվան հաջորդող օրվանից, օրական կտրվածքով, Քարտի գործողության ողջ ժամկետի համար:

5.6. Յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Հաշվին՝ այդ ամսվա վերջին աշխատանքային օրը: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին (տասնչորսին), իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է, հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում՝ առ տվյալ օրը կուտակված տոկոսագումարները վճարվում են Հաշվին:

5.7. Եթե Հաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից, ապա հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Քարտատիրոջ ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առջև ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

5.8. Եթե Հաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից և Քարտատերը Քարտի գործողության ժամկետի ընթացքում դիմում է Բանկ Քարտի գործողության դադարեցման նպատակով, և առկա է Քարտի դրական մնացորդի դիմաց կուտակված տոկոսագումար, ապա այն վճարվում է Քարտատիրոջ ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առջև ու վաճառքը կատարվում է նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

5.9. Արտարժույթային Քարտի սպասարկման դեպքում Քարտատիրոջ անունով բացվում է ՀՀ դրամ արժույթով ընթացիկ հաշիվ:

5.10. Հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով կատարված գործարքների գծով գեղծարարության, դրա կասկածի առկայի կամ կատարված գործարքների բողոքարկման ստացման դեպքում Հաշվին տվյալ ծառայության միջոցով մուտքագրված դրամական միջոցների տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել առկա դրամը կարող են անակցեպտ գանձվել Հաշվից, իսկ դրանում միջոցների անբավարարության դեպքում Քարտատիրոջ այլ հաշիվներից, այդ թվում՝ ավանդային: Ընդ որում, անակցեպտ գանձումը կատարվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ դրանում միջոցների անբավարարության դեպքում՝ այլ արժույթով հաշիվներից՝ կատարելով արտարժույթի փոխարկում տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով: Քարտատիրոջ՝ Բանկում առկա բոլոր հաշիվներին գումարի անբավարարության դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտատիրոջ տասնօրյա ժամկետում Բանկին վճարելի հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով ստացված դրամական միջոցները:

6. Cashback ծրագրի կանոնները

6.1. Cashback ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսում է American Express Cashback Քարտով Հայաստանում կատարված բոլոր վճարային գործառնությունների 1%-ի (մեկ տոկոս) չափով վճարում Քարտատիրոջ Հաշվին, որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

6.2. ՀՀ-ում գործող մի շարք սուպերմարկետներում վճարումներ կատարելու դեպքում Ծրագրի շրջանակում American Express Cashback Քարտատիրոջ Հաշվին կվճարվի Գործառնությունների գումարի 2%-ը (երկու տոկոս), որից կգանձվի և ՀՀ պետական բյուջե կվճարվի եկամտահարկ՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

6.3. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով American Express Cashback Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

6.4. Կանխիկացման գործառնությունների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ՀՀ տարածքից դուրս կատարված վճարային գործառնությունների (ներառյալ ՀՀ առևտրային բանկերի կողմից չսպասարկվող կայքերում կատարված օնլայն վճարումների), ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Cashback չի կիրառվում:

6.5. Ծրագրի շրջանակում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է American Express Cashback Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրը:

6.6. American Express Cashback Քարտը որպես Լրացուցիչ Քարտ տրամադրելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է Քարտի պատվիրման օրվանից յուրաքանչյուր տասներկու ամիսը մեկ՝ տասներկուերորդ ամսվա վերջին բանկային օրը, իսկ վերջին տարվա վճարման ենթակա գումարը, ինչպես նաև Լրացուցիչ Քարտը 1 (մեկ) տարուց պակաս գործողության ժամկետով տրամադրելու դեպքում վճարման ենթակա գումարը Հաշվին վճարվում է հիմնական քարտի գործողության ժամկետի վերջին ամսվա վերջին բանկային օրը:

6.7. Ծրագիրը գործում է American Express Cashback Քարտի ակտիվացման պահից, մինչ վերջինիս գործողության ժամկետի ավարտը:

6.8. Քարտատիրոջ կողմից American Express Cashback Քարտը գործողության ժամկետից շուտ փակելու դեպքում Ծրագրի շրջանակում կուտակված և դեռևս չվճարված գումարները զրոյացվում են և ենթակա չեն վճարման American Express Cashback Քարտատիրոջ Հաշվին:

7. Membership Rewards ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կանոնները

7.1. Ծրագիրը գործում է American Express Gold և American Express Blue քարտերի համար՝ ստորև ներկայացված կարգով:

7.2. American Express Gold քարտեր

7.2.1. Ծրագրին անդամակցումը կարող է իրականացվել 2 եղանակով.

- Քարտի պատվիրման պահին՝ Քարտի դիմումում համապատասխան նշում կատարելու միջոցով,
- Քարտի ստացումից հետո ցանկացած ժամանակ՝ այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ և լրացնելով Membership Rewards ծրագրին անդամակցման դիմումը:

7.2.2. Քարտատիրոջ անդամակցումը Ծրագրին կատարվում է 1 (մեկ) տարի ժամկետով, բայց ոչ ավել, քան Քարտի գործողության ժամկետն է: Ծրագրին Քարտատիրոջ մասնակցության ժամկետը լրանալու դեպքում այն ավտոմատ երկարաձգվում է ևս 1 (մեկ) տարով, սակայն ոչ ավել, քան Քարտի գործողության ժամկետն է, եթե նախապես Քարտատերը Բանկին չի տեղեկացրել Ծրագրում իր մասնակցությունը դադարեցնելու վերաբերյալ: Ծրագրին Քարտատիրոջ մասնակցության ավտոմատ երկարաձգման ժամանակ Քարտատիրոջ Հաշվից գանձվում է Բանկի Սակագներով սահմանված Ծրագրին մասնակցության անդամավճարը:

7.2.3. Քարտատերն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել Ծրագրին իր մասնակցությունը՝ լրացնելով համապատասխան դիմում:

7.2.4. ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով Քարտերի՝ Ծրագրին անդամակցման դեպքում Բանկի Սակագներով սահմանված Ծրագրին մասնակցության անդամավճարը գանձվում է անդամակցման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

7.2.5. Քարտի փոխարինման պարագայում Քարտատիրոջ նոր Քարտից Ծրագրին անդամակցության վճար չի գանձվում, եթե նախկին Քարտից գանձված անդամակցության տարեկան վճարի ժամանակահատվածը դեռ չի ավարտվել: Նոր Քարտից գանձումը կատարվում է նախկին Քարտից անդամակցության վճարի գանձման օրվանից մեկ օրացուցային տարի հետո՝ որպես անդամակցության հերթական տարեկան վճար:

7.2.6. Քարտից քարտ փոխանցումների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Membership Rewards միավորներ (այսուհետ՝ Միավորներ) չեն կուտակվում:

7.2.7. Հայաստանում և արտերկրում կատարված յուրաքանչյուր 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարային գործառնության և 1 000 ՀՀ դրամ կանխիկացման գործառնության դիմաց Քարտատերը ստանում է 1 (մեկ) Միավոր:

7.2.8. Կից Քարտերի միջոցով առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումների և կանխիկացման գործառնությունների դիմաց վաստակած Միավորներն ավելանում են Քարտատիրոջ՝ հիմնական Քարտի միջոցով վաստակած ընդհանուր Միավորներին և ենթակա են տնօրինման հիմնական Քարտատիրոջ կողմից:

7.3. American Express Blue քարտեր

7.3.1. Ծրագրին անդամակցումը կատարվում է ավտոմատ կերպով Քարտի ձեռքբերման հետ մեկտեղ և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:

7.3.2. Ծրագիրը գործում է Քարտի ակտիվացման պահից, մինչ վերջինիս գործողության ժամկետի ավարտը:

7.3.3. Կանխիկացման գործառնությունների, բանկային հաշիվների միջև փոխանցումների, քարտից քարտ փոխանցումների, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, Բանկին տրամադրված պարբերական վճարման հանձնարարականով կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ՀՀ տարածքից դուրս կատարված վճարային

գործառնությունների (ներառյալ ՀՀ առևտրային բանկերի կողմից չսպասարկվող կայքերում կատարված վճարումների), ինչպես նաև ՀՀ տարածքում գրանցված էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքների և բջջային օպերատորների գրասենյակներում վճարումների դեպքում Membership Rewards միավորներ (այսուհետ՝ միավորներ) չեն կուտակվում:

7.3.4. Յուրաքանչյուր 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարային գործառնության դիմաց Քարտատերը ստանում է 1 (մեկ) Միավոր:

7.3.5. Կից Քարտերի միջոցով առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումների դիմաց վաստակած Միավորներն ավելանում են Քարտատիրոջ՝ Հիմնական Քարտի միջոցով վաստակած ընդհանուր Միավորներին և ենթակա են տնօրինման Հիմնական Քարտատիրոջ կողմից:

7.4. Քարտատիրոջ կողմից կատարված ցանկացած Գործառնություն ամբողջությամբ կամ մասնակիորեն բողոքարկելու հետևանքով Գործառնության գումարի հետ վերադարձման դեպքում Քարտատիրոջ կողմից՝ Կանոններով սահմանված կարգով տվյալ Գործառնության դիմաց կուտակված Միավորները կամ դրանց համապատասխան մասը նույնպես չեղյալ են համարվում:

7.5. Բանկը պարբերաբար կարող է Քարտատիրոջը ընձեռել հավելյալ Միավորներ վաստակելու հնարավորություն՝ ներկայացնելով հնարավորությունից օգտվելու ժամկետն ու պայմանները տարբեր տեղեկատվական միջոցներով:

7.6. Միավորները հասանելի են Քարտատիրոջը Քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում: Քարտի գործողության ժամկետը լրանալու դեպքում Միավորները պահպանվում են, եթե վերաթողարկված Քարտը ստացվում է Քարտատիրոջ կողմից առավելագույնը Քարտի գործողության ժամկետը լրանալու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում: Քարտի գործողության ժամկետը լրանալու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում վերաթողարկված Քարտը չստանալու դեպքում Քարտատիրոջ Քարտը փակվում է և Քարտատիրոջը հնարավորություն է տրվում հաջորդ 3 (երեք) ամիսների ընթացքում սպառել կուտակված Միավորները, որից հետո կուտակված և չսպառված Միավորները գրոյացվում են և ենթակա չեն վերականգնման:

7.7. Քարտատերը կարող է իր կուտակված Միավորների մասին տեղեկատվություն ստանալ, ինչպես նաև օգտագործել Միավորները՝ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն (+374 10) 31 99 99 հեռախոսահամարով:

7.8. Կուտակված Միավորները չեն կարող օգտագործվել գումարի կանխիկացման կամ Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման նպատակով:

7.9. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ ձևափոխել Ծրագիրը կամ ստեղծել Ծրագրի նոր տարբերակ՝ պահպանելով Քարտատիրոջ կուտակված Միավորները:

7.10. Բանկն իրավունք ունի կասեցնել ժամկետանց պարտավորություն և/կամ Քարտի սպասարկման միջնորդավճարի պարտավորություն ունեցող Քարտատերերի Միավորների հաշվարկը և/կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն սահմանափակել նշված Քարտատիրոջ կողմից վաստակած միավորների օգտագործման հնարավորությունը, իսկ նշված պարտավորությունները 6 (վեց) ամսվա ընթացքում Քարտատիրոջ կողմից չմարելու դեպքում դադարեցնել Քարտատիրոջ անդամակցումը ծրագրին՝ չեղյալ համարելով Քարտատիրոջ կուտակված Միավորները:

7.11. Բանկն իրավունք ունի զեղծարարության կամ զեղծարար գործարքի կասկածի դեպքում չեղարկել Քարտատիրոջ՝ Միավորներից օգտվելու հնարավորությունը: Ձեղծարարության չափանիշները սահմանվում են Բանկի կողմից:

7.12. Ծրագրի շրջանակում Միավորների հաշվարկման հիմք է հանդիսանում գործարքի ձևակերպման օրը, ընդ որում՝ թե գործարքը և թե կուտակված Միավորները կարող են արտացոլվել Քարտատիրոջ Հաշվի քաղվածքում միայն ձևակերպումից հետո՝ արտացոլելով նաև ձևակերպման ամսաթիվը:

7.13. ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով Քարտերի համար Միավորների հաշվարկման հիմք է հանդիսանում գործարքի ձևակերպման օրվա դրությամբ Բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը:

7.14. Այն դեպքում, երբ Քարտատերն ունի մեկից ավելի American Express Gold/American Express Blue Քարտեր, նա ցանկացած ժամանակ իրավունք ունի իրականացնել կուտակված Միավորների տեղափոխում իր նույն տեսակի Քարտերի միջև՝ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն կամ լրացնելով համապատասխան դիմում Բանկի մասնաճյուղում:

7.15. Ծրագրին մասնակցությունը ենթադրում է լիարժեք համաձայնություն բոլոր պայմանների հետ:

7.16. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտատիրոջն առաջարկվող ապրանքների և ծառայությունների տեսականու մեջ ներառված ապրանքը և/կամ ծառայությունը առևտրի և սպասարկման կետում սպառվելու կամ այլ հիմքով տվյալ պահին անհասանելի լինելու համար: Նման իրավիճակում Քարտատիրոջը առաջարկվում է ընտրություն կատարել այլ ապրանքների և ծառայությունների տեսականուց:

8. «Ճանապարհային օժանդակություն» ծառայության կանոնները

8.1. «Ճանապարհային օժանդակություն» ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) նախատեսում է American Express Gold և American Express Blue Քարտերի Քարտատերերի պատվերով խափանված մարդատար ավտոմեքենայի (քաշը չպետք է գերազանցի 3 տոննան) տարհանման ծառայության անվճար մատուցում:

8.2. American Express Blue քարտերի դեպքում Ծառայությունը Քարտատիրոջը մատուցվում է Երևան քաղաքի տարածքում, իսկ American Express Gold քարտերի դեպքում՝ Հայաստանի ողջ տարածքում 150 կմ շառավղով:

8.3. Ծառայությունը Քարտատիրոջը հասանելի է շուրջօրյա և իրականացվում է բացառապես վերջինիս կողմից (+374 10) 31 99 99 հեռախոսահամարով Բանկ զանգահարելու միջոցով կատարված պատվերի հիման վրա:

8.4. Ծառայությունը Քարտատիրոջը անվճար մատուցվում է տարին առավելագույնը 2 (երկու) անգամ, սույն պայմանների 7.5. կետում սահմանված դրույթների ապահովման պայմանով: Ընդ որում, տարեկան 2 (երկու) անգամ Ծառայության մատուցումը ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ կից Քարտերի Քարտատերերի համար մատուցված ծառայությունների հանրագումարը: Տարվա հաշվարկը կատարվում է Քարտը ձեռք բերելու օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի հիմքով և չարունակվում նույն սկզբունքով:

8.5. Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված են հետևյալ պայմանները.

ա) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունը տարիանման ենթակա ավտոմեքենայի գտնվելու վայրում և իր American Express Blue քարտի կամ American Express Gold քարտի կամ անձը հաստատող փաստաթղթի առկայությունը իր մոտ Ծառայության մատուցման պահին: Տարիանվող տրանսպորտային միջոցը պետք է ունենա հիմնական հայկական հաշվառման համարանիշ, որը կհամապատասխանի տվյալ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում նշված հաշվառման համարանիշին: Վերջինս նախապես հաստատվում է Քարտատիրոջ կողմից պատվեր կատարելիս, այնուհետ ստուգվում նշված հասցեով ավտոմեքենայի տարիանման նպատակով ուղարկված քարշակ մեքենայի ժամանումից հետո՝ քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Բանկ զանգահարելու և Բանկի կողմից Քարտատիրոջ ինքնությունը հաստատելու միջոցով,

բ) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունը ավտոմեքենայի տարիանման վերջնակետում, ինչը հաստատվում է քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Ծառայության մատուցման ստացականի լրացման և Քարտատիրոջ կողմից ստորագրման միջոցով:

8.6. Ծառայության անվճար մատուցումը չի տարածվում նոր գնված ավտոմեքենաների՝ մաքսատան տարածքից տարիանման դեպքերի վրա:

8.7. Սույն Կանոնների 7.4 կետում սահմանված պատվերների քանակը գերազանցելու, ինչպես նաև 7.2 կետում նշված սահմաններից դուրս Ծառայության պատվերների դեպքերում Քարտատերն իրավունք ունի օգտվել Ծառայությունից՝ Ծառայությունը մատուցած ընկերությանը Ծառայության արժեքն իր կողմից վճարելու և դրա մասին պատվերի իրականացման պահին իր ցանկությունը Բանկին նախապես հայտնելու պայմանով:

8.8. Ծառայության արժեքը Քարտատիրոջ կողմից վճարելու պայմանով Ծառայությունից օգտվելու սակագները սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում www.americanexpress.am կայքում:

8.9. Բանկն իրավունք ունի չմատուցել Ծառայությունը Քարտատիրոջը, կասեցնել Ծառայության հետագա մատուցումը կամ դադարեցնել American Express Blue քարտի կամ American Express Gold քարտի և Քարտատիրոջ հետ կնքված American Express Blue կամ American Express Gold վարկային Քարտով տրամադրվող վարկային զօի պայմանագրի գործողությունը և պահանջել Քարտատիրոջից վերադարձնել Քարտը Բանկին հետևյալ դեպքերում՝

ա) եթե առկա է Քարտատիրոջ կողմից Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պայմանների միտումնավոր խախտման կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

բ) եթե առկա է Բանկին խեղաթյուրված, կեղծ տեղեկատվության տրամադրմամբ պատվերների կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

գ) եթե առկա է Ծառայությունից անվճար օգտվելու սեփական հնարավորություններն այլ անձանց օգտին որևէ այլ շահ հետապնդելու նպատակով կամ անշահախնդիր օգտագործելու կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք:

9. Priority Pass քարտի տրամադրման և սպասարկման կանոնները

9.1. Priority Pass քարտը Հիմնական և Կից American Express Gold քարտերի հետ տրամադրվող քարտ է, որը հնարավորություն է տալիս Քարտատերերին օգտվել բազմաթիվ օդանավակայանների սպասարահներից առավել մատչելի սակագներով:

9.2. Priority Pass համակարգի ցանցում ներառված օդանավակայանների սպասարահների ցանկին և վերջիններիս կողմից առաջարկվող ծառայություններին Քարտատերերը կարող են ծանոթանալ այցելելով Priority Pass համակարգի պաշտոնական կայքէջ՝ www.prioritypass.com:

9.3. Priority Pass քարտը Քարտատերերին տրամադրվում է 3 տարի ժամկետով, սակայն ոչ ավել քան Հիմնական քարտի գործողության ժամկետն է:

9.4. Priority Pass քարտի գործողության ժամկետի ավարտին քարտը ավտոմատ կերպով վերաթողարկվում է:

9.5. Priority Pass քարտի սակագները սահմանվում են համաձայն Բանկում գործող Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների:

9.6. Քարտատերերի, ինչպես նաև նրանց հյուրերի այցելությունների համար սահմանված մուտքի զուևարը գանձվում է Priority Pass քարտին կցված Հիմնական American Express Gold քարտի Հաշվից՝ սպասարահ մուտք գործելու օրվանից հետո մի քանի օրերի ընթացքում:

9.7. Priority Pass ընկերության կողմից Քարտատիրոջ կողմից ծառայությունից օգտվելու համար սահմանված սակագների գանձումների անհնարինության դեպքում Priority Pass քարտը կարող է արգելափակվել՝ մինչև գանձման համար անհրաժեշտ գումարի ապահովումը Քարտին:

9.8. Priority Pass քարտով կատարված այցելությունների համար չվճարված գումարները հանդիսանում են պարտավորություն և ենթակա են վճարման Քարտատիրոջ կողմից:

9.9. Քարտատերերը հնարավորություն ունեն օգտվել նաև Priority Pass քարտի էլեկտրոնային տարբերակից բջջային հավելվածի միջոցով, որն ամբողջությամբ փոխարինում է Priority Pass քարտին: Բջջային հավելվածը հասանելի է դառնում քարտը պատվիրելուց հետո:

9.10. Priority Pass բջջային տարբերակի օգտագործման համար անհրաժեշտ է հեռախոսի մեջ ներբեռնել Priority Pass հավելվածը, մուտքագրել Բանկի կողմից Քարտատերերին տրամադրվող մուտքանունը և գաղտնաբառը, այնուհետև QR կոդով մոտենալ ցանկացած սպասարահ:

9.11. Քարտատիրոջ American Express Gold քարտի փակման դեպքում, եթե Քարտատերը ունի գործող այլ American Express Gold քարտ, ապա Priority Pass քարտը կցվում է այդ գործող քարտին, իսկ վերջինիս բացակայության դեպքում Priority Pass քարտը ենթակա է փակման:

9.12. Քարտատերը կարող է ցանկացած ժամանակ փակել իր Priority Pass քարտը՝ այդ մասին տեղեկացնելով Բանկին:

10. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

10.1. Քարտատերն իրավունք ունի՝

- 10.1.1. Դիմել Բանկ փոփոխելու Քարտի ծախսային սահմանաչափերը՝ Բանկի կանոններով նախատեսված չափով,
- 10.1.2. Դիմել Բանկ Քարտին վարկային գծի ակտիվացնելու համար, (American Express Cashback Քարտի դեպքում)
- 10.1.3. Դիմել Բանկ Քարտի գործողության դադարեցման կամ Քարտի փոխարինման համար, Կից Քարտ(եր)ի տրամադրման համար: Ընդ որում, Կից Քարտերով կատարված Գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Ամերիքն Էքսպրեսսի կանոններով սահմանված կարգով, որոնց համար պատասխանատվություն է կրում Քարտատերը,
- 10.1.4. Քարտի գործողության դադարեցման, Քարտի կորստի, վնասման, ՊԻՆ-կոդը մոռանալու կամ այլ դեպքերում Չաշվին առկա սեփական միջոցները կանխիկ ստանալ Չաշվից՝ համաձայն Սակագների,
- 10.1.5. Բանավոր կամ գրավոր դիմել Բանկ Քարտի բլոկավորման համար: Ընդ որում, Քարտի բլոկավորման բանավոր կամ գրավոր դիմումը չի ենթադրում Բանկի կողմից Չաշվի փակում և չի դադարեցնում Քարտատիրոջ Չաշվի սպասարկման միջնորդավճարի գանձումը,
- 10.1.6. Կանոններից բխող բողոք-պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

10.2. Քարտատերը պարտավորվում է՝

- 10.2.1. Նախքան Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելը՝ ծանոթանալ Սակագների, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքերում՝ www.acba.am, www.americanexpress.am, և տեղադրված են Բանկի Կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի հաճախորդների սպասարկման սրահներում,
- 10.2.2. Բանկի առաջին իսկ պահանջով կամ մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-րդ (տասնչորսերորդ) օրը, իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ հաջորդող առաջին աշխատանքային օրը մարել Չաշվին առաջացած գերածախսի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարը և Չաշվի սպասարկման միջնորդավճարը,
- 10.2.3. Անմիջապես հայտնել Բանկին Քարտի կորստի կամ գողության փաստի մասին՝ զանգահարելով (+374 10) 31 99 99 հեռախոսահամարով կամ Բանկ գրավոր դիմում ներկայացնելով և 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում դիմել Բանկ Քարտի փոխարինման համար,
- 10.2.4. Զօգտագործել Քարտը փողերի վճարման, ահաբեկչության ֆինանսավորման և օրենքով արգելված այլ գործունեություն ծավալելու նպատակով,
- 10.2.5. Վերադարձնել Քարտը Բանկին Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո 14 (տասնչորս) օրացուցային օրվա ընթացքում,
- 10.2.6. Պահպանել էլեկտրոնային վճարման անվտանգության պահանջները, մասնավորապես.
 - ա) էլեկտրոնային վճարումներ կատարել միայն այն ինտերնետային կայքերում, որոնց հասցեն սկսվում է “https” հապավումով կամ պարունակում է «Secure Sockets Layer (SSL)» նշումը,
 - բ) ապահովել Բանկում գրանցված գաղտնաբառի գաղտնիությունը,
 - գ) ապահովել Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեի գաղտնաբառի գաղտնիությունը,
 - դ) ապահովել Քարտի իսկությունը ստուգող կոդի գաղտնիությունը,
 - ե) ապահովել Քարտատիրոջ կողմից տրամադրված հեռախոսահամարին ուղարկված 3D Secure անվտանգության կոդի գաղտնիությունը,
 - զ) Քարտով Գործառնություն իրականացնելիս ուշադիր զննել անդորրագրում նշված գումարի ճշտությունը և որից հետո միայն հաստատել այն:
- 10.2.7. Քարտի ստացման դիմումում ներկայացված տվյալների (անձնագրային տվյալներ, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն), ինչպես նաև վարկային գծի (առկայության դեպքում) ստացման համար ներկայացված փաստաթղթերում և նշված տեղեկատվության փոփոխության դեպքում 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին գրավոր կամ Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն (+374 10) 31 99 99 հեռախոսահամարով զանգահարելու միջոցով:

10.3. Բանկն իրավունք ունի՝

- 10.3.1. Գանձել Չաշվի սպասարկման միջնորդավճարը Քարտատիրոջ վարկային գծից (առկայության դեպքում), իսկ վերջինիս բացակայության կամ անբավարարության դեպքում սպասարկման միջնորդավճարի գումարը ձևակերպել որպես գերածախս,
- 10.3.2. Յուրաքանչյուր Գործառնություն կատարելիս և Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելիս ծառայությունների համար վճարները գանձել Չաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտատիրոջ այլ բանկային հաշիվներից,
- 10.3.3. Քարտատիրոջը տրամադրել ժամանակավոր օվերդրաֆտ՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով: Ընդ որում, ժամանակավոր օվերդրաֆտի հնարավորությունը տրամադրվում է առավելագույնը 14 (տասնչորս) օրացուցային օրով և ենթակա է մարման ժամանակավոր օվերդրաֆտի տրամադրումից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում,
- 10.3.4. Քարտի անօրինական տիրապետման մասին հիմնավոր կասկած ունենալու դեպքում դադարեցնել Քարտի գործողությունը և պահանջել Քարտատիրոջից վերադարձնել Քարտը Բանկ,
- 10.3.5. Միակողմանիորեն բլոկավորել Քարտը, եթե.
 - ա) առկա է Քարտով գեղծարար գործարքների իրականացման վտանգ: Այդ դեպքում Քարտը կարող է ապաբլոկավորվել, եթե Քարտատերը բանավոր կամ գրավոր հաստատում է տվյալ գործարքների իր կողմից կատարված լինելը,

բ) Քարտով տրամադրված վարկի կամ Բանկում այլ վարկերի գծով առկա են ժամկետանց պարտավորություններ: Այդ դեպքում բլոկավորումը կատարվում է մինչև ժամկետանց պարտավորությունների մարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

գ) Պայմանագրով սահմանված կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.3.6. Կանոնների [9.2.2.](#) [10.2.2.](#) կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի չմարված գերաժախսի գումարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի նկատմամբ հաշվարկել տուժանք, որը ենթակա է վճարման Քարտատիրոջ կողմից: Տուժանքի չափը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն, որը չի կարող գերազանցել յուրաքանչյուր օրվա համար 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսը,

10.3.7. Քարտատիրոջ կողմից Քարտի գործողության դադարեցման համար Բանկին գրավոր կամ բանավոր դիմելուց անմիջապես հետո իրականացնել Քարտի բլոկավորում, իսկ Հաշվի և Քարտի փակումը իրականացնել Քարտատիրոջ գրավոր դիմումի հիման վրա Քարտով նախկինում կատարված բոլոր Գործառնությունները Հաշվով ձևակերպելուց և դրանց համար Սակագներով նախատեսված միջնորդավճարները զանձեւուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Քարտի փակումը հնարավոր է իրականացնել միայն բոլոր դրամային պարտավորությունները (Հաշվի սպասարկման միջնորդավճարը, գերաժախսի և դրա տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, գերաժախսի տոկոսները, գերաժախսի գումարը, վարկային գծի գումարի (առկայության դեպքում) և տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց տոկոսները, ժամկետանց վարկային գծի գումարը (առկայության դեպքում), տոկոսները և վարկային գծի գումարը) կատարելուց հետո,

10.3.8. Առանց Քարտատիրոջ նախնական համաձայնության, փոխանցել Կանոններից բխող իր իրավունքներն ու պարտավորությունները Ամերիքն Էքսպրեսսի կազմում ներառված կամ վերջինիս կողմից մատնանշված որևէ երրորդ անձի և Կանոններից բխող իր իրավունքների և պարտավորությունների փոխանցում իրականացնելու համար վերջիններիս տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն,

10.3.9. Առանց Քարտատիրոջ համաձայնության ուղղել Հաշվով Գործառնություններ իրականացնելիս իր կողմից թույլ տրված սխալները,

10.3.10. Ցանկացած պահին Ամերիքն Էքսպրեսսի պահանջով կամ իր պահանջով դադարեցնել Քարտատիրոջ հետ կնքված Պայմանագրի գործողությունը,

10.3.11. Վերաթողարկել Քարտը՝ հիմք ընդունելով Քարտով կատարված Գործառնությունների ծավալը, Քարտի սպասարկման միջնորդավճարի վճարումները և Քարտային հաշվին առկա միջոցները, ժամկետանց օրերի քանակը: Ընդ որում, Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Բանկի կողմից վերաթողարկված Քարտը 3 (երեք) ամիսների ընթացքում չստանալու դեպքում Քարտը ոչնչացվում է, իսկ Քարտատիրոջ կողմից օգտագործված վարկային գծի մարումն իրականացվում է Բանկի և Քարտատիրոջ միջև կնքված Պայմանագրի համաձայն,

10.3.12. Տրամադրել Կանոնների շրջանակում իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները Ամերիքն Էքսպրեսսին կամ Ամերիքն Էքսպրեսսի կազմում ներառված և/կամ վերջինիս հետ համագործակցող և/կամ վերջինիս կողմից մատնանշված որևէ այլ իրավաբանական անձի,

10.3.13. Քարտատիրոջ անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին՝ իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով, և միայն այն անձին, ում անունով բացված է Հաշիվը,

10.3.14. Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով սահմանված կարգով [Քարտապահի Քարտատիրոջը](#) ծանուցելով: Քարտային հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, Բանկը դրանք փոխանցում է Բանկի համապատասխան հաշվապահական հաշվին [Քարտապահի Քարտատիրոջ](#) կողմից այդ դրամական միջոցների ստացման նպատակով:

10.3.15. Միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Կանոններում և Սակագներում, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 17.06.2013 թվականին հաստատված eFO 72-00-502#5 American Express Gold Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմանների գործող խմբագրությունում, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 15.10.2015 թվականին հաստատված eFO 72-00-504#5 American Express Blue Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմանների գործող խմբագրությունում, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 18.02.2020 թվականին հաստատված eFO 72-00-505#5 American Express Cashback, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 12.01.2015 թվականին հաստատված eFO 72-16-33#5 «Ամերիքն Էքսպրեսս Գոլդ Քարտի Ծառայությունների համառոտ նկարագրություն» փաստաթղթի գործող խմբագրությունում, (իրապարակվում են նաև www.americanexpress.am կայքում), որոնցում սահմանվում են Պայմանագրին վերաբերող և չհակասող այլ կարգավորումներ՝ փոփոխությունների և լրացումների ուժի մեջ մտնելուց 15 աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության ստացման համար սահմանված կարգով Քարտատիրոջը ծանուցելով,

10.3.16. Եթե Քարտատերը Բանկի հանդեպ ունի մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը կատարման ենթակա Պայմանագրից բխող դրամային պարտավորություն, գործառնական օրվա ավարտից հետո զանձել պարտքի (այդ թվում՝ տուժանքի, տոկոսների, գերաժախսի, վարկի, սպասարկման միջնորդավճարի) գումարը Քարտատիրոջ՝ Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից՝ բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայության դեպքում՝ վեց ամսվա ընթացքում, իսկ բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրումից հետո վեց ամսվա ընթացքում:

10.4. Բանկը պարտավորվում է՝

10.4.1. Քարտատիրոջը Քարտը տրամադրել Դիմումի ստացման և Դիմումը Բանկի կողմից հաստատվելու պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում,

10.4.2. Հնարավորություն տալ Քարտատիրոջն օգտագործել իր Հաշվին նուստագրված միջոցները առավելագույնը հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ից,

10.4.3. Ամսական պարբերականությամբ Քարտատիրոջը տրամադրել Հաշվի քաղվածքը, բացառությամբ, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը Հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

11. Քարտով կատարված Գործառնությունների գծով գերածախսը

11.1. Այն դեպքերում, երբ Բանկը վճարում է Հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը կամ անբավարարությանը (գերածախս), նա նման վճար կատարելու օրվանից համարվում է Քարտատիրոջը համապատասխան գումարով վարկ տրամադրած:

11.2. Գերածախսը պարտավորություն է, որն առաջանում է Քարտով Գործառնություն կատարելու արդյունքում՝ հանգեցնելով Քարտի մնացորդի գերազանցմանը:

11.3. Հաշվի գերածախս կարող է առաջանալ, օրինակ, հետևյալ դեպքերում.

ա) եթե Գործառնության կատարման համար Բանկից չի պահանջվել հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) և Գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

բ) Քարտով կատարված Գործառնության դիմաց Սակագներով սահմանված գանձման ենթակա միջնորդավճարի գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

գ) Քարտատերը օգտագործել է Բանկի կողմից տրամադրված ժամանակավոր օվերդրաֆտը և սահմանված ժամկետում չի մարել այն,

դ) եթե Քարտին ստացված կրեդիտային գործարքը ավելի ուշ է ձևակերպվել Հաշվին, քան Քարտատիրոջ կողմից այդ կրեդիտային գործարքի գումարի օգտագործման գործարքը, և Գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

ե) Հաշվի արժույթից տարբերվող արժույթով իրականացվող Գործառնության կատարման և տվյալ Գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի տարբերության հաշվին,

զ) Բանկի անհասանելի լինելու դեպքում Բանկի կողմից նախապես սահմանված արժեքների սահմաններում Ամերիքն Էքսպրեսի կողմից գործարքի հավաստագրման արդյունքում Գործառնության գումարը գերազանցել է Քարտի մնացորդը,

է) եթե Ամերիքն Էքսպրեսի կողմից սահմանված ժամկետներում գործարքի առաջին ներկայացումը չստանալու հետևանքով Քարտին վերականգնված գործարքի գումարը կամ տեխնիկական այլ պատճառներով Քարտին սխալմամբ նուստագրված գումարը օգտագործվում է Քարտատիրոջ կողմից կամ օգտագործվում է Բանկի կողմից Քարտատիրոջ պարտավորությունների մարման նպատակով,

ը) եթե Քարտով կատարված Գործառնությունը Բանկում չի ձևակերպվել, և Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը արգելադրվել/բռնագանձվել է Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ժառանգության կողմից,

թ) եթե ոչ աշխատանքային ժամերին և օրերին Քարտին նուստագրվող միջոցների ակտիվացումից հետո Քարտատերն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործել է դրանք, և այդ Գործառնությունները Բանկում դեռ չեն ձևակերպվել, իսկ ձևակերպման պահին գանձման ենթակա միջնորդավճարները և/կամ կուտակված տոկոսագումարը գերազանցել են Հաշվի մնացորդը,

ժ) եթե մինչև Քարտով կատարված Գործառնությունների՝ Բանկում ձևակերպվելը Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը Քարտատիրոջ կողմից կամ իր հանձնարարականի հիման վրա ելքագրվել է Հաշվից, և Գործառնությունների ձևակերպման պահին Գործառնությունների գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը:

11.4. Հաշվի գերածախսի ձևակերպման օրվանից կատարվում է Սակագներով սահմանված չափի տոկոսագումարների հաշվարկ՝ օրական կտրվածքով:

11.5. Առաջացած գերածախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարը գանձվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ տուժանքը, տոկոսները՝ ՀՀ դրամով հաշիվներից: Եթե համապատասխան հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, այն գանձվում է Քարտատիրոջ այլ բանկային հաշիվներից: Այդ պարագայում արտարժույթի առքն ու վաճառքը առաջացած գերածախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարի գանձման դեպքում կատարվում է տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով, իսկ տուժանքի, տոկոսների և սպասարկման միջնորդավճարի գանձման դեպքում՝ նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից սահմանած միջին շուկայական փոխարժեքով:

12. Առանց հաշվի բացման փոխանցումները Քարտատիրոջ Քարտային հաշվին փոխանցելու կարգը և պայմանները.

12.1. Քարտատիրոջ անունով ստացված առանց հաշվի բացման դրամական միջոցները կարող են Քարտատիրոջ կողմից տրված վճարման հանձնարարականի հիման վրա փոխանցվել Քարտատիրոջ Հաշվին:

12.2. Քարտատերը վճարման հանձնարարականը ներկայացնում է Բանկի հեռախոսագանգի միջոցով՝ Բանկի պատասխանատու աշխատակցին հայտնելով իր անունը, ազգանունը, Քարտի համարը, Քարտի գաղտնաբառը և փոխանցման նույնականացման համարը:

12.3. Բանկի պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի հեռախոսագանգի պատկանելության հավաստիության ապահովման և դրանում տեղ գտած սխալների բացահայտման նպատակով Քարտատիրոջից հարցնել լրացուցիչ տեղեկատվություն՝ փոխանցողի անունը, ազգանունը, գումարի չափը և այլն:

12.4. Հեռախոսագանգը պետք է կատարվի Բանկի (+374 10) 31 88 88 հեռախոսահամարին:

12.5. Բանկը պարտավորվում է մինչև հեռախոսագանգը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը դրամական միջոցներն ուղղել Քարտատիրոջ Հաշվին:

12.6. Բանկը պարտավորվում է չկատարել վճարման հանձնարարականը, եթե Քարտատիրոջ կողմից ներկայացվել է սխալ նույնականացման համար, կամ, եթե վճարման հանձնարարականը չի համապատասխանում Կանոնների 12.2, 12.3 և 12.4 կետերի պահանջներին:

12.7. Այն դեպքում, երբ փոխանցված գումարի արժույթն այլ է, քան Քարտատիրոջ Հաշվի արժույթը, դրամական միջոցները Քարտատիրոջ հեռախոսագանգի ընդունման պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով փոխարկվում և փոխանցվում են Քարտատիրոջ հաշվեհամարին:

13. Արժույթի փոխարկումը

13.1. Քարտատերը Քարտով կարող է իրականացնել Գործառնություններ՝ Հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ Պայմանագրով և Կանոններով սահմանված պայմաններով և կարգով:

13.2. **Գործառնության կատարման պահին** Գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի՝ հիմք ընդունելով Գործառնության կատարման պահին Ամերիքն Էքսպրեսսի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված տոկոսադրույթը:

13.3. **Գործառնության մշակման պահին գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի հետևյալ կարգով.**

13.3.1. Բանկի սպասարկման ցանցում Գործառնություններ իրականացնելիս Գործառնությունների գումարն անհրաժեշտության դեպքում փոխարկվում է Հաշվի արժույթի Կանոնների **13.7 13.3.6** կետում սահմանված կարգով:

13.3.2. Այլ բանկերի սպասարկման ցանցում ԱՄՆ դոլար արժույթով Գործառնություններ իրականացնելիս Գործառնությունների գումարը անհրաժեշտության դեպքում փոխարկվում է Հաշվի արժույթի Կանոնների **13.7 13.3.6** կետում սահմանված կարգով:

13.3.3. ~~Եթե վճարման Գործառնության արժույթը տարբեր է Հաշվի արժույթից, ապա Ամերիքն Էքսպրեսսը գանձում է միջնորդավճար՝ American Express Blue, և American Express Cashback Քարտերի դեպքում՝ Գործառնության գումարի 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ American Express Gold Քարտերի դեպքում՝ 1.5 (մեկ ամբողջ հիսուն հարյուրերորդական) տոկոսի չափով:~~

13.3.4. Այլ բանկերի սպասարկման ցանցում ԱՄՆ դոլար արժույթից տարբեր արժույթով կատարված Գործառնությունների գումարը Ամերիքն Էքսպրեսսի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի **արժույթի Գործառնության մշակման օրվա դրությամբ արտարժույթի միջբանկային շուկաներում ձևավորված փոխարժեքների հիման վրա կատարման պահին Ամերիքն Էքսպրեսս վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով** և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Կանոնների **13.8 13.3.6** կետում սահմանված կարգով, բացառությամբ եվրո քարտերով եվրո արժույթով կատարված Գործառնությունների, որոնց դեպքում Հաշվից գանձվում է Գործառնության գումարի չափով գումար: Եթե վճարման Գործառնության արժույթը տարբեր է Քարտի արժույթից, ապա Ամերիքն Էքսպրեսսը գանձում է միջնորդավճար՝ American Express Blue և American Express Cashback Քարտի դեպքում՝ Գործառնության գումարի 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ American Express Gold Քարտերի դեպքում՝ Գործառնության գումարի 1.5 (մեկ ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

13.3.5. Կանխիկի ստացման գործառնությունների միջնորդավճարի և Գործառնության արժույթը Քարտի արժույթից տարբեր լինելու հետևանքով սույն Կանոններով սահմանված կարգով Գործառնության գումարի՝ 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ American Express Blue և American Express Cashback Քարտի դեպքում, և 1.5 (մեկ ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ American Express Gold Քարտերի դեպքում, միջնորդավճարի գանձման պարագայում արտարժույթի առուվաճառքը կատարվում է տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով, իսկ այլ միջնորդավճարների դեպքում՝ տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

13.3.6. **Գործառնության մշակման պահին Փոխարկումը Հաշվի արժույթի** ՀՀ դրամային արժույթով քարտերի դեպքում փոխարկումը Հաշվի արժույթի կատարվում է Գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային Գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով: ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով քարտերի դեպքում փոխարկումը կատարվում է տարանցիկ փոխարժեքով, որը հաշվարկվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքի միջոցով: Քարտատիրոջ Հաշվին ձևակերպվում է գործառնության մշակման արդյունքում փոխարկված և հաշվարկված գումարը:

13.4. **13.9** Գործառնության կատարման և Գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի **փոխարժեքի և փոխարկման մեխանիզմների** տարբերության հետևանքով Հաշվով ձևակերպված Գործառնության գումարը տարբերվում է Գործառնության կատարման պահին Քարտից գանձված գումարից:

13.5. **13.10** Արտարժույթային քարտերի համար Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարները գանձվում են ձևակերպման պահին ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

13.6. **13.11** ՀՀ տարածքում բանկոմատների միջոցով իրականացվող քարտից քարտ փոխանցումները կատարվում են ՀՀ դրամ արժույթով՝ անկախ Հաշվի արժույթից: Ընդ որում, ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերով կատարված քարտից քարտ փոխանցումները և/կամ ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերին ստացված քարտից քարտ փոխանցումների գումարները փոխարկվում են Հաշվի արժույթի՝ համաձայն Պայմանների 13.2 և **13.8 13.3.6** կետերի:

14. Քարտի օգտագործման և անվտանգության կանոնները

14.1. Երրորդ անձանց կողմից Քարտի անօրինական օգտագործումից խուսափելու նպատակով Քարտատերը պարտավորվում է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

14.1.1. Քարտը ստանալիս անհապաղ ստորագրել Քարտի հետնամասում Քարտատիրոջ ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում,

14.1.2. ապահովել Քարտի տվյալների և ՊԻՆ-կոդի գաղտնիությունը, ինչի համար խորհուրդ է տրվում ոչնչացնել ՊԻՆ-կոդը պարունակող ստացականը (առկայության դեպքում), ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Քարտի տվյալների և/կամ ՊԻՆ-կոդի անհասանելիությունն այլ անձանցից կամ նկարահանող սարքերից ապահովելու համար, չգրել ՊԻՆ-կոդը Քարտի վրա, հեռախոսի ու համակարգչի մեջ և չպահել այն Քարտի հետ միասին կամ երրորդ անձանց համար այլ հասանելի վայրում, Քարտը և ՊԻՆ-կոդը չտրամադրել այլ անձանց, այդ թվում՝ Բանկի աշխատակիցներին,

14.1.3. ապահովել Բանկում գրանցված գաղտնաբառի գաղտնիությունը,

14.1.4. ապահովել Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեի գաղտնաբառի գաղտնիությունը,

14.1.5. ապահովել Քարտի իսկությունը ստուգող կոդի գաղտնիությունը,

14.1.6. ապահովել Քարտատիրոջ կողմից տրամադրված հեռախոսահամարին ուղարկված 3D Secure անվտանգության կոդի գաղտնիությունը,

14.1.7. Քարտով Գործառնություն իրականացնելիս ուշադիր զննել կտրոնում նշված գումարի ճշտությունը և որից հետո միայն ստորագրել այն,

14.1.8. ինտերնետում վճարում կատարելիս օգտվել միայն այն կայքերից, որոնց հասցեները սկսվում են «https» հապավումով կամ ունեն «Secure Sockets Layer (SSL)» կրիպտոգրաֆիկ արարողակարգ:

14.2. Քարտի կորստի կամ գողության դեպքում Քարտատերը պարտավորվում է.

14.2.1. [«ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով իրականացնել Քարտի բլոկավորում](#) կամ Քարտը բլոկավորելու համար [դիմել Բանկ անհապաղ ներկայանալ Բանկի մոտակա մասնաճյուղ](#) Քարտի բլոկավորման դիմում ներկայացնելու [միջոցով համար](#) կամ զանգահարել [ԲԿ \(+374 10\) 31 88 99](#) կամ [\(+374 10\) 31 88 88](#) կամ [\(+374 10\) 59 22 22](#) հեռախոսահամարներին

14.2.2. Քարտի փոխարինման կամ փակման համար Քարտը բլոկավորելուց հետո 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում դիմել Բանկ,

14.2.3. կորած քարտը գտնելու դեպքում այն վերադարձնել Բանկ:

14.3. [Քարտապահի Քարտատիրոջ](#) գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Բանկը կարող է տեղեկացնել [Քարտապահին Քարտատիրոջը](#) Քարտով գործառնությունների [\(ներառյալ այն գործառնությունների, երբ կատարվել է գործարքի բողոքարկում, հետվճար կամ այլ այնպիսի գործարք, որի արդյունքում գործարքի գումարը հետ է վերադարձվել Հաշվին\)](#) վերաբերյալ Բանկում գրանցված հիմնական բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրություններ ուղարկելու միջոցով: [ՌԻՎՅՈՒՄ ԲԱՆԿԸ Քարտատիրոջը Հաշվից գանձում է Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարը: Հաշվին անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարը գանձվում է չօգտագործված վարկային գծի \(առկայության դեպքում\) գումարից: Չօգտագործված վարկային գծի բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարի գումարը հաշվառվում է որպես գերաժախտ, որի համար Բանկը Քարտապահի Հաշվից գանձում է Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարը: Ընդ որում, SMS հաղորդագրություններ ուղարկվում են նաև Բանկի կողմից նախահաստատված մերժման կոդերով մերժված գործարքների համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ կատարվել է գործարքի բողոքարկում, հետվճար կամ այլ այնպիսի գործարք, որի արդյունքում գործարքի գումարը հետ է վերադարձվել Հաշվին:](#)

14.4. [SMS հաղորդագրությունները Քարտատիրոջը ուղարկվում են հայերեն լեզվով, եթե Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Քարտատերը հաղորդակցման այլ լեզու չի ընտրել և Քարտատիրոջը կողմից ընտրված գումարային շեմից բարձր գումարի գործարքների համար: Ընդ որում Բանկի կողմից Սակագներով սահմանված միջնորդավճարներ կամ այլ գանձումներ իրականացնելիս կիրառվում է Բանկի կողմից սահմանված միասնական նվազագույն շեմը, որը դրամային քարտերի դեպքում սահմանված է 200 ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար արժույթով քարտերի դեպքում՝ 1 ԱՄՆ դոլար և եվրո արժույթով քարտերի դեպքում՝ 1 եվրո:](#)

14.5. [Այն դեպքում, երբ Քարտատիրոջը տեղեկացվում է կատարված գործարքի գումարը Հաշվին հետ վերադարձվելու \(ապաստեցնելու\) մասին կամ Բանկի կողմից նախահաստատված մերժման կոդերով մերժված գործարքների համար SMS հաղորդագրություններ ուղարկման դեպքում Քարտատիրոջը կողմից ընտրված նվազագույն շեմը չի կիրառվում:](#)

14.6. [Քարտատերը պարտավորվում է չձևափոխել և չվնասել Քարտը:](#)

15. Քարտով կատարված Գործառնությունների բողոքարկման կարգը և պայմանները

15.1. Եթե Քարտատիրոջը կողմից բողոքարկվող Գործառնությունը կանխիկի ստացման գործառնություն է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման միայն այն դեպքում, եթե տվյալ բանկումատը կամ կանխիկի տրամադրման կետը սպասարկող բանկը ընդունում է կանխիկ գումարի չտրամադրման փաստը:

15.2. Եթե Քարտատիրոջը կողմից բողոքարկվող գործարքը վճարման, էլեկտրոնային վճարման կամ Քարտի տվյալների ներկայացմանը վճարման Գործառնություն է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման, եթե Ամերիքն Էքսպրեսսի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում Բանկը հետ է ստանում բողոքարկվող Գործառնության գումարը սպասարկող բանկից:

15.3. ՀՀ և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերին կատարված Քարտից քարտ փոխանցումները ենթակա չեն բողոքարկման:

15.4. Եթե Բանկը, Ամերիքն Էքսպրեսսի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում որոշում է կայացնում չչարունակել բողոքարկման գործընթացը, սակայն Քարտատերը ցանկանում է անցնել բողոքարկման գործընթացի վերջին փուլին և դիմել Ամերիքն Էքսպրեսսի արբիտրաժային կոմիտեին, ապա նշված արբիտրաժային կոմիտեին դիմելու համար սահմանված միջնորդավճարները, ինչպես նաև Ամերիքն Էքսպրեսսի կողմից հօգուտ մյուս կողմի որոշում կայացնելու դեպքում Բանկի կրած ծախսերը փոխհատուցվում են Քարտատիրոջը կողմից:

15.5. Քարտատերն իրավունք ունի բողոքարկել իր Քարտով կատարված Գործառնությունը վերջինիս կատարման օրվանից 55 (հիսունհինգ) օրացուցային օրվա ընթացքում:

15.6. Բողոքարկման դիմումի ներկայացման օրվանից առավելագույնը 90 (իննսուն) օրացուցային օրվա ընթացքում Բանկը Քարտատիրոջը ներկայացնում է հիմնավոր պատասխան բավարարելով կամ մերժելով բողոքարկման դիմումը:

16. Պատասխանատվությունը

16.1. Քարտատերը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում.

16.1.1. Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության դեպքում Քարտով կատարված Գործառնությունների համար մինչև Բանկին Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության մասին հայտնելը, բացառությամբ հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների, որոնց համար լրիվ ֆինանսական պատասխանատվությունը կրում է Քարտատերը, եթե Քարտի տվյալների գողության մասին Բանկ հայտնելու ժամանակ Քարտը Բանկ հետ չի վերադարձվում Քարտատիրոջ կողմից,

16.1.2. Քարտատիրոջ կողմից Քարտի գործողության դադարեցման դիմումի ներկայացման պահին Քարտը Բանկ հետ չվերադարձնելու դեպքում, Քարտի գործողության դադարեցումից հետո մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը Քարտով կատարված հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար,

16.1.3. Քարտով ՊԻՆ-կոդի միջոցով իրականացված բոլոր Գործառնությունների համար, բացառությամբ Քարտի գործողության դադարեցման նպատակով Բանկ դիմելուց և Քարտը Բանկ հետ վերադարձնելուց հետո հավաստագրում (Գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների,

16.1.4. Հաշվին կցված Կից Քարտ(եր)ով կատարված Գործառնությունների համար:

16.2. Բանկը պատասխանատվություն չի կրում.

16.2.1. Ուշացված, սխալ կամ չիրականացված Գործառնությունների համար, որոնք առաջացել են առևտրի և սպասարկման կետերի կամ Ամերիքն Էքսպրեսսի մեղքով կամ տեխնիկական պատճառներով, որոնք Բանկի ողջամիտ հսկողությունից դուրս են եղել,

16.2.2. Բանկին չպատկանող միջոցներով իրականացված կանխկացման կամ վճարման գործառնությունների ձախողման համար, եթե Բանկը ձախողման մեջ չի ունեցել մեղավորություն,

16.2.3. Քարտի կամ Քարտի տվյալների միջոցով իրականացված անօրինական Գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

16.2.4. Միկրոպրոցեսորային (չիպային) Քարտով ՊԻՆ-կոդի միջոցով իրականացված Գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

16.2.5. Ինտերնետի միջոցով իրականացված Գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,

16.2.6. Այն Գործառնությունների համար, որոնք կատարվել են Պայմանագրում սահմանված անվտանգության կանոնների խախտմամբ,

16.2.7. Քարտատիրոջ ու առևտրի և սպասարկման կետերի միջև առաջացած վեճերի համար,

16.2.8. Հաշվի, ՊԻՆ-կոդի, Քարտի համարի, գաղտնաբառի և Քարտի վերաբերյալ այլ տեղեկատվությունը Բանկից անկախ պատճառներով երրորդ անձանց հայտնի դառնալու համար,

16.2.9. Անհպում տեխնոլոգիայով իրականացված գործարքների համար, որոնք կատարվել են տվյալ վճարային համակարգի կանոններով ՊԻՆ կոդի մուտքագրում չպահանջող վճարային համակարգի կանոններով սահմանված առավելագույն թույլատրելի սահմանաչափի շրջանակում,

16.2.10. ՀՀ և արտասահմանյան բանկերի քարտերին կատարված քարտից քարտ փոխանցումների համար, եթե փոխանցման ժամանակ [Քարտապանի Քարտատիրոջ](#) կողմից մուտքագրվող քարտի համարը կամ հեռախոսահամարը (հեռախոսահամարով փոխանցումների դեպքում) նշվել է սխալ:

16.2.11. Կեղծ հեռախոսազանգի հիման վրա Քարտը բլոկավորելու արդյունքում հասցված վնասների համար:

16.2.12. Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ [Քարտապանի Քարտատիրոջ](#) բջջային հեռախոսի համարին SMS հաղորդագրության տեսքով ուղարկված տեղեկատվության՝ երրորդ անձանց հայտնի դառնալու համար, ինչպես նաև [Քարտապանի Քարտատիրոջ](#) բջջային հեռախոսի կամ բջջային կապի ծառայությունների մատուցող կազմակերպության տեխնիկական խախտումների հետևանքով Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ [Քարտապանի Քարտատիրոջ](#) բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված SMS հաղորդագրությունը [Քարտապանի Քարտատիրոջ](#) կողմից չստանալու կամ սխալ բովանդակությամբ ստանալու համար:

17. Այլ պայմաններ

17.1. Կանոններից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու պարագայում Կանոններից ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

17.2. Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերից յուրաքանչյուրը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվում է կողմերի՝ Պայմանագրում կամ ճանաչիր հանախորդի (KYC) հարցաթերթիկում նշված հասցեին կամ հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին՝ անկախ այն ստացողի կողմից փաստացի ստանալու հանգամանքից:

18. Համաձայնություններ

18.1. Քարտատերը, ստորագրելով վճարային քարտի դիմումը, ծանուցվում և տալիս է իր համաձայնությունը, որ.

- Բանկը հարցում կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամին, և վերջինիս տրամադրի իր վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը կարող է կիրառվել Բանկի կողմից:

• Սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքերի վերաբերյալ Բանկը հարցում կատարի ՀՀ կադաստրի կոմիտե և ստանա սպառիչ տեղեկատվություն իր գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային գործից ստանա սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, իր անունից դիմում ներկայացնի ՀՀ կադաստրի կոմիտե, կատարի անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունքի պետական գրանցում, ստանա փաստաթղթեր, կատարի վճարումներ՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• Սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցների վերաբերյալ Բանկը հարցում կատարի ՀՀ ճանապարհային ոստիկանություն և ստանա սպառիչ տեղեկատվություն տրանսպորտային միջոցների նկատմամբ իր գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև ստանա սեփականության իրավունքի վկայականի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• Բանկը հարցում կատարի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին և ապահովագրական ընկերություններին և ստանա ցանկացած տեղեկատվություն սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցների ապահովագրության վերաբերյալ (այդ թվում՝ ապահովագրի և շահառուների վերաբերյալ տեղեկություններ)՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• Բանկի կողմից իրեն ուղարկվեն ծանուցումներ՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած տեղեկատվության վերաբերյալ:

• «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և Պայմանագրի հիման վրա՝ Բանկը առավելագույնը 50 տարվա ընթացքում հարցումներ կատարի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ), ստանա նշված անձնական տվյալները և դրանք ներառի Բանկի համապատասխան տեղեկատվական բազաներում՝ ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից՝ անձը հաստատող փաստաթղթի կամ ԲԾՀ/հրաժարման տեղեկանքի տվյալներ և դրանց պատմություն, կարգավիճակ, քաղաքացիություն, մահվան օր, ամիս, տարի, մշտական բնակության վայր, լուսանկար, ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից՝ ծննդի, ամուսնության, ամուսնալուծության, որդեգրման, հայրության որոշման, անվան փոխման, մահվան պետական գրանցման տվյալներ, ՀՀ ճանապարհային ոստիկանությունից՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի օտարման սահմանափակումների, տրանսպորտային միջոցի սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքների ծագման, փոփոխման, դադարման վերաբերյալ տվյալներ, ԱՊՊԱ պայմանագրի վերաբերյալ տվյալներ, ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ իրավաբանական անձանց ստեղծման, վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման վերաբերյալ տվյալներ, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունից՝ ցանկացած տեսակի սահմանափակումներ, դրանց ամբողջական պատմություն, ներառյալ՝ արգելանքի վերաբերյալ դատարանի որոշման և կատարողական թերթի վերաբերյալ տվյալներ, ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից՝ աշխատանքային պայմանագրի և աշխատավարձի վերաբերյալ տվյալներ, քաղվածք անձնական հաշվի բարտի վերաբերյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ, դեբետային գումարներ, միասնական հաշվում առկա գումարներ և այլն, գործունեության և կարգավիճակի մասին տեղեկատվություն, բոլոր տեսակի հաշվետվությունների վերաբերյալ տվյալներ, ՀՀ կադաստրի կոմիտեից՝ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տվյալներ: Նշված տեղեկությունները օգտագործվելու, ուսումնասիրվելու և վերլուծվելու են Քարտատիրոջ ներգրավմամբ ցանկացած բիզնես գործընթացում հետևյալ նպատակներով՝ Քարտատիրոջ անձնական տվյալների վերաբերյալ ստույգ տվյալների ստացում, առավել պատշաճ նույնականացում և տվյալների բազայի ուղղումների իրականացում, սպասարկման ժամանակատարության կրճատում, տեխնիկական սխալների բացառում, գրավադրվող գույքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացում: Վերը նշված տվյալները, ինչպես նաև Քարտատիրոջ վերաբերյալ բանկային զաղտմիք հանդիսացող տեղեկությունները կարող են փոխանցվել "ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ" ՓԲԸ-ին, ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Քարտատիրոջը դրամական փոխանցումներ կատարող անձանց, այն անձանց, որոնց կանոնադրական կապիտալում Բանկը ունի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն և/կամ այն անձանց, որոնք Բանկի կանոնադրական կապիտալում ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Բանկը իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել է համագործակցության/ծառայությունների մատուցման պայմանագրեր: Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել ցանկացած ժամանակ Քարտատիրոջ գրավոր դիմումի հիման վրա, եթե Քարտատերը տվյալ պահին չի օգտվում, ինչպես նաև ներգրավված չէ Բանկի կողմից մատուցվող որևէ ծառայությունում, և եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

18.2. Քարտատերը հավաստիացնում է, որ՝

18.2.1. իր մասնակցությամբ մինչ Պայմանագրի կնքումը հարուցված կամ ավարտված քրեական, քաղաքացիական, աշխատանքային կամ վարչական գործեր չկան, որոնք էականորեն սպառնում են Քարտատիրոջ ակտիվներին, գործարքների վավերությանը կամ դրանցից բխող պարտավորությունների կատարմանը,

18.2.2. ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն Պայմանագիրը և դրա հավելվածները կնքելու համար,

18.2.3. չունի չկատարված պարտավորություններ, որոնց չկատարման համար ճանաչվել է սնանկ, իրեն սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի հայցով դատարան դիմում չի ներկայացվել,

18.2.4. իր գույքի (ակտիվների) նկատմամբ որևէ սահմանափակումներ առկա չեն և չեն կանխատեսվում,

18.2.5. մինչև Պայմանագրի կնքումը և/կամ կատարումը իր կողմից կնքված այլ պայմանագրերի շրջանակում որևէ համաձայնության ստացման կամ ծանուցումների ներկայացման անհրաժեշտություն չկա,

18.2.6. իր կնքած պայմանագրերը չեն նախատեսում պարտավորությունների կատարման ստորադասում,

18.2.7. Պայմանագրի գործողության ընթացքում կգործի ՀՀ օրենսդրության (այդ թվում՝ հարկային, առողջապահական, անվտանգության, աշխատանքային և էկոլոգիական ոլորտների) համաձայն,

18.2.8. իրավասու է զբաղվել այնպիսի գործունեությամբ, որով զբաղվում է,

18.2.9. Պայմանագիրը կնքելիս չի գտնվում մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի, չարամիտ համաձայնության կամ դժվար կացության մեջ, լիովին հասկանում է իր գործողությունների նշանակությունը, ծանոթ է Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 12.01.2015 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-16-33#5 «Ամերիքն Էքսպրեսս Գոլդ Քարտի Ծառայությունների համառոտ նկարագրություն» փաստաթղթին, Բանկի Ամերիքն Էքսպրեսս Գոլդ Քարտերին կից տրամադրվող Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 17.06.2013 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-00-502#5 ապահովագրության պայմաններին, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 15.10.2015 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-00-504#5 American Express Blue Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններին, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից 18.02.2020 թվականին հաստատված և Պայմանագրի կնքման պահին գործող eFO 72-00-505#5 American Express Cashback Քարտատերերին տրամադրվող ապահովագրական ծառայությունների ընդհանուր պայմաններին, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը, և համաձայն է դրանցում նշված պայմաններին (հրապարակվում են նաև www.americanexpress.am կայքում):

19. Ծանուցում Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

ՀԱՐՁԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև վճարային քարտի դիմումը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոսը՝ 58-35-14

Ինտերնետային կայքը՝ www.adgf.am

Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

| Ավանդի արժույթային կառուցվածքը | Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ | Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ | Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ | |
|---------------------------------------|--|--|---|--|
| | | | Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է | Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է |
| Ավանդի երաշխավորման առավելագույն չափը | 16 միլիոն ՀՀ դրամ | 7 միլիոն ՀՀ դրամ | մինչև 16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը) | երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով |

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել էք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժնիները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝
 ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ) _____

չերաշխավորված ավանդ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: